ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԶՕՐԱՑ ՔԱՐԵՐ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ

ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍԵԱՆ
piliposyan@yahoo.com

Պատմական Սիւնիքի հնագիտական յուշարձանների մէջ յատուկ տեղ ունի Զօրաց Քարեր հնավայրը: Գրականութեան մէջ այն յայտնի է *Դիք-Դիք* կամ *Ցից-Ցից Քարեր*, *Զօրաց Քարեր*, *Քարեզօրք*, *Ղոշուն Դաշ*, վերջերս նաեւ *Քարահունջ* անուանական տարբերակներով[1]: Յուշարձանը գտնւում է Սիսիան քաղաքից 3 կմ հիւսիս, Որոտան Գետի Դար վտակի ձախ ափին, ծովի մակարդակից 1770 մ բարձրութիւն ունեցող հարթեցուած հրուանդանի վրայ: Յուշարձանի աշխարհագրական տուեալներն են՝ հս. լ. 39°33′02.52″ը եւ արւ. երկ. 46°01′42.96″ը:

Ժողովրդական զրոյցների համաձայն հնում յուշարձանի տարածքում գոյութիւն ունեցող մեծ քարակոյտերի մէջ զօրավարներ, իսկ ուղղահայեաց կանգնեցուած հսկայ քարաբեկորների տակ զինուորներ են թաղել[2]: Հենց այդ պատճառով էլ հնավայրը «Զօրաց Քարեր» անուանումն է ստացել:

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին տարածքը հետազօտել են Ե. Մելիք-Շահնազարովն ու Երուանդ Լալայեանը, 1920-30ականներին՝ Ստեփան Լիսիցեանը, 50-60ականներին՝ Մօրուս Հասրաթեանը եւ Ս. Եսայեանը, 70-80ականներին՝ Օ. Խնկիկեանը, Է. Պարսամեանը, Գ. Արեշեանը, Բ. Սադոյեանը, Ի. դարավերջին եւ ԻԱ. դարասկզբին՝ Պարիս Հերունին, ապա Հ. Մարտիրոսեանը, Վ. եւ Մ. Վահրադեանները, իսկ 2010-15՝ հնագէտներ Ա. Փիլիպոսեանը, Ա. Բոբոխեանը, Հ. Աւետիսեանը, Ա. Գնունին, Գ. Սարգսեանը եւ այլոք[3]: Այդուհանդերձ, առ այսօր, հնավայրը մասնագիտական առումով պատշաճ եւ համակողմանի ուսումնասիրուած չէ, ինչն էլ հակասական, անհաւանական, երբեմն նաեւ ոչ-գիտական բազմաթիւ մեկնաբանութիւնների տեղիք է տալիս:

Սիսիանի եւ դրա մերձակայքի մասին տեղեկութիւններ պարունակող առայժմ ամենավաղ գրաւոր սկզբնաղբիւրները՝ Վանի Թագաւորութեան (Ուրարտու) երեք սեպագիր արձանագրութիւններն են: Վերջիններս թէեւ ուղղակի փաստեր չեն տալիս Զօրաց Քարեր հնավայրի մասին, սակայն կարեւոր նիւթեր են պարունակում այս տարածքի Ք.ա. Ը.-Է. դդ. ընկերա-քաղաքական գործընթացների վերաբերեալ: Դրանք, պահպանուել են Սարդուրի Բ.ի (Ք.ա. 764–35) տարեգրութեան մի հատուածում[4],

Թանահատ Վանքի մօտ գտնուած Արգիշթի Բ.ի (Ք.ա. 714–685) քարակոթողի սեպագիր արձանագրութեան մէջ[5] եւ Ռուսա Բ.ի (Ք.ա. 685-45)՝ Այանիսում բացուած susi տաճարի մուտքի արձանագրութիւնում[6]:

Սարդուրի Բ.ի տարեգրութեան խնդրոյ առարկայ հատուածը[7] հաղորդում է.-

[13] ... Նոյն տարում երկրորդ անգամ (ես) շարժուեցի Էթիունի (երկրի), Լիքի (երկրի) [14] կողմը: Էդիանի (քաղաքը[8]), արքայական քաղաքն Աբիանի (առաջնորդի), (որ) ամրացուել էր, մարտում (ես) գրաւեցի: [15] Իրուիա(նի) (քաղաքը), արքայական քաղաքն Իրկուա(ինի) (առաջնորդի), (որ) ամրացուել էր, [16] մարտում (ես) գրաւեցի: Իրդուա(նի) (քաղաքը), արքայական քաղաքն Ուերդա(ինի) (առաջնորդի), (որ) ամրացուել [17] էր, մարտում (ես) գրաւեցի: Բուինի(ալխի) (քաղաքի) արքային (ես) ծառայ դարձրի (եւ) վրան հարկ [18] կարգեցի, (որպէսզի նա) հարկատու լինի Սարդուրի (արքային): Այս չորս ամրոցները [19] երկրներում ես նուաճեցի: Տղամարդկանց, կանանց այստեղից (ես) գաղթեցրի: [20] 3500 պատանի, 15000 կին, 4000 զինուորներ [21] (ես) տարայ: 8525 (գլուխ) խոշոր եղջերաւոր անասուն (այստեղից ես) քշեցի: 18000 (գլուխ) մանր եղջերաւոր անասուն (այստեղից ես) քշեցի...

Ուրարտագէտ Գ. Մելիքիշվիլու կարծիքով, Սարդուրի Բ.ի տարեգրութեան վերը ներկայացուած հատուածում հաղորդում է Ք.ա. 751-50՝ Անդրկովկասի հարաւում[9] տեղի ունեցած իրադարձութիւնների մասին, որոնցում, ընդհանուր առմամբ, յատկապէս ընդգծում է Էթիունի (վկայուած է նաեւ Էթիուխի ձեւով) համադաշնութեան դերը: Վերջինս զբաղեցնում էր Սարիղամիշից մինչեւ Սեւանայ Լիճը եւ Գուգարքից մինչեւ Արաքս Գետի աւազանը[10]: Խնդիրն աւելի որոշակիացաւ 1975ին, երբ Սիսիանից ոչ-հեռու՝ Թանահատ Վանքի մերձակայքում յայտնաբերուեց Ք.ա. Ը.-Է. դդ. սամանագծին Արգիշթի Բ.ի կանգնեցրած քարակոթողը՝ դիմային եւ հակադարձ նիստերին մասնակի պահպանուած սեպագիր արձանագրութիւններով[11]: Դրանք յայտնում են.-

Դիմային նիստ

1. Խալդի (աստծուն), փիրոջը,
2. այս կոթողը Արգիշթին՝
3. Ռուսայի որդին կանգնեցրեց,
4. (իր) կեանքի համար:
5. Թող լինի Խալդի (աստծոյ) կողմից
6. Արգիշթի (արքային)
7. Ռուսայի որդուն
8. բարերարութիւն, ekuše (?),

9. երջանկութիւն, կեանք,
10. ուրախութիւն, վեհութիւն,
11. ինչպէս նաեւ իշխանութիւն,
12. ուժ (եւ) հզօրութիւն:
13. Խալդեան զօրութեամբ...
.....
.....
?? ...մէկ օրում (ես) նուաճեցի...
.....

Հակադարձ նիստ

1. Ինձ ներկայացաւ ... արքան
2. Էթիուխի երկրի, փուեց հարկը
3. (իր) երկրի: Որոշ քաղաքներ
4. լսեցին ..... տեղում:
5. Որոշ զօրաջոկատներ
6. ari biri (?)[12]: Այստեղ ջարդ
7. (ես) արեցի, տղամարդկանց, կանանց տարայ,
8. քաղաքներն այրեցի, ամրոցներն աւերեցի:
9. Iśiaşie (?) բոլորը միասին:
10. Ճակատամարտ եղաւ: Մեծաւորները
11. Ծուլուքու (երկրի) այնտեղից
12. (եկան եւ) Իրդուա քաղաքի դիմաց կանգնեցին
13. իմ առջեւ: Զազինու արքային ես ստրկացրի,
14. հարկ սահմանեցի: Խալդեան
15. զօրութեամբ արշաւող (?)
16. Արգիշթին՝ Ռուսայի որդին,
17. արքայ է հզօր, արքան Բիայնա (երկրի),
18. Տէրը Տուշպա քաղաքի:
19. Խալդեան հրամանով
20. Արգիշթին ասում է. Ամէնքը (?)
21. Շիփնի աստծոյ [տաճարի] քրմապետի (?) դիակիզմանը (?) [եկան ?]:
22. Գնացի (ես) այդ ճանապարհով (դէպի)
23. Ամուշա (քաղաքը), տղամարդկանց,
24. կանանց քշեցի Բիայնա (երկիրը):
25. Արգիշթին ասում է.
26. ով (իմ) անունը ոչնչացնի
27. (եւ) իր անունը տեղադրի, լինի (նա)
28. բիայնացի, (թէ) լինի
29. թշնամի, թող Խալդի (աստուածը)
30. Թէյշեբա (աստուածը), Շիփնի (աստուածը), բոլոր (միւս) աստուածները
31. ոչ (նրա) անունը, ոչ
32. սերմը, ոչ
33. սերունդը երկրի վրայ

34. չթողնեն:

Արձանագրութեան մէջ, փաստօրէն, տրւում են, դէպի Էթիուխի (Էթիունի) համադաշնութեան արեւելեան շրջաններն Արգիշթի Բ.ի կատարած արշաւանքի մանրամասները: Համաձայն արձանագրութեան՝ թէեւ Էթիուխիի առաջնորդը ներկայացել է Արգիշթի Բ.ին, տուել համադաշնութեան հարկը ու յայտնել իր հնազանդութիւնը, այդուհանդերձ, նրա իշխանութեան տակ գտնուող հարաւային որոշ քաղաքների կառավարիչներ - Ծուլուքու Երկրի առաջնորդ Զազինուի թելադրանքով - չեն ենթարկուել ուրարտացի արքային եւ պատրաստուել դիմադրութեան: Մարտում ընդդիմադիրներն անյաջողութիւն են կրել եւ, արդէն ստիպուած, Ծուլուքուի ծերակոյտն Իրդուա քաղաքի առջեւ ներկայացել է Արգիշթի Բ.ին, ընդունել նրա բոլոր պայմանները եւ ողորմածութիւն հայցել: Զազինու առաջնորդը ստրկացուել է եւ պարտաւորուել հարկ վճարել: Արձանագրութիւնից երեւում է, որ անգամ այս ամենից յետոյ, Ծուլուքու Երկրի մէկ այլ քաղաքի՝ Ամուշայի բնակիչները շարունակել են դիմադրութիւնը եւ միայն զգալի կորուստների գնով Արգիշթի Բ.ին յաջողուել է վերջնականապէս հնազանդեցնել նրանց, ապա ներկայիս Թանահատ Վանքի մօտ կանգնեցնել է իր յաղթական կոթողը:

Թանահատի արձանագրութիւնը ոչ միայն կարեւոր տեղեկութիւններ է տալիս պատմական Սիւնիքում եւ մասնաւորապէս ժամանակակից Սիսիան քաղաքին յարակից տարածքներում Ք.ա. Ը. դարավերջին եւ Է. դարի առաջին քառորդին տեղի ունեցած դէպքերի մասին, այլեւ հնարաւորութիւն է ընձեռում տեղանուանական վերակազմութիւններ կատարել: Ըստ այդմ, բացառիկ նշանակութիւն ունի Էթիունի (Էթիուխի) համադաշնութեան Ծուլուքու երկրանուան յիշատակումը, որը մասնագէտների կարծիքով տեղորոշւում է Սիսիանի շրջանում եւ ուղղակիօրէն կապուած է միջնադարեան Սիւնիքի Ծղուկ Գաւառի անուան հետ[13]: Արձանագրութեան մէջ յիշատակուող Ծուլուքու Երկրի Իրդուա եւ Ամուշա քաղաքների անուանումների արձագանգները եւս, ըստ Ն. Յարութիւնեանի, հնարաւոր է նկատել պատմական Սիւնիքի Ծղուկ գաւառում յիշատակուող Մուցք, Արիտ եւ Արթէք բնակավայրերի անուններում[14]: Այս ենթահողում աշխատում է նաեւ Սարդուրի Բ.ի տարեգրութեան համապատասխան հատուածում պահպանուած տեղեկատուութիւնը Էթիունի երկրի 4 քաղաքների նուաճման մասին[15]: Դրանց թւում (Թանահատի արձանագրութիւնում նկարագրուող դէպքերից շուրջ կէս դար առաջ) յիշատակւում է նաեւ Ուերդա առաջնորդի Իրդուա արքայական քաղաքը: Այսինքն, Սարդուրի Բ.ի տարեգրութեան այդ հատուածում եւս խօսւում է դէպի Ծուլուքու Երկիր

կատարուած արշաւանքի մասին, առանց յիշատակելու վերջինիս անունը: Դրա փոխարէն բերւում են նոյն տարածքում գտնուող եւս 3 քաղաքների (Էրիդա, Իրուիա, Բուինիալխի) եւ դրանցից 2ի առաջնորդների (Աբիանի, Իրկուա) անունները: Այս տարածքից Ք.ա. Ը. դարակէսին Սարդուրի Բ.ի տարուած 8525 գլուխ խոշոր եւ 18,000 գլուխ մանր եղջերաւոր անասունների, գերեվարուած 3500 պատանիների, 15,000 կանանց եւ 4000 զինուորների ընդհանուր քանակը (դրան աւելացրած Արգիշթի Բ.ի Ք.ա. Ը. դարավերջի կամ Է. դարասկզբի աւարը) վկայում է տեղում Ք.ա. Ը.-Է. դարերում ձեւաւորուած, տնտեսական զգալի հնարաւորութիւնների, ինչպէս նաեւ մարդկային ու ռազմական լուրջ ներուժ ունեցող ցեղային կազմաւորման մասին: Ներկայացուածն ինքնին հաստատում է նաեւ Այանիսի ուրարտական ամրոցի, Խալդի աստծոյ **susi** տաճարի մուտքի աջ հատուածում Ռուսա Բ.ի թողած սեպագիր արձանագրութիւնը, որի 10-11րդ տողերում[16] արձանագրուած է.-

[10] Ռուսա Արգիշթորդին ասում է. փարայ փղամարդկանց, կանանց [ու անասունը] թշնամի երկրների՝ Աշշուրի, [11] Թարգունիի, Էթիունիի, Թաբլանիի, Քայնարուի, Խաթէի, Մուշքինիի, Ծիլուքուի...

Ուրեմն Ծուլուքու Երկիրը (արձանագրութիւնում տրուած է «Ծիլուքու» ձեւով) Ք.ա. Է. դարի առաջին կէսին, հզօր Աշշուրի, Խաթէի, Մուշկերի երկրի եւ Էթիունիի հետ միասին հակառակորդ կողմ էր Վանի Թագաւորութեանը (Ուրարտու):

Բանն այն է, որ Զօրաց Քարերի մասին կարեւոր տեղեկութիւններ են տալիս ինչպես յուշարձանից, այնպէս էլ նրա շրջակայքից հաւաքուած նիւթական մշակոյթի մնացորդները: Դեռեւս 1930ականներին այս տարածքից հնագիտական նիւթեր է հաւաքել ազգագրագէտ Լիսիցեանը[17], իսկ 1980ականներին Զօրաց Քարերում երկաթէդարեան դամբարաններ է պեղել Խնկիկեանը[18]:

Զօրաց Քարերում հնագիտական աշխատանքները վերսկսուեցին 2013ին ՀՀ մշակոյթի նախարարութեան «Պատմամշակութային Արգելոց-Թանգարանների եւ Պատմական Միջավայրի Պահպանութեան Ծառայութիւն» ՊՈԱԿի հնագիտական արշաւախմբի կողմից (ղեկավար՝ պրոֆեսոր Ա. Փիլիպոսեան): Դրանք մէկ անգամ եւս հաստատեցին հնավայրի տարածքում բնակավայրի եւ նրան կից դամբարանադաշտի առկայութիւնը: Բնակավայրը զբաղեցնում է յուշարձանի հիւսիսային հատուածը, շրջափակուած է տեղ-տեղ մինչեւ 2 մ բարձրութեան հասնող կոպտաշար պարսպով եւ ունի մուտք, որը հարաւային կողմից է: Բնակավայրում նկատելի են ուղղանկիւնաձեւ կառոյցների, բոլորաձեւ շինութեան, թաքստոցների եւ տնտեսական հորերի մնացորդներ, որոնք,

ժամանակի ընթացքում (Ք.ա. ԺԹ. դարից մինչեւ Ք.ե. ԺԴ. դար) բազմիցս վերակառուցումների են ենթարկուել:

Դամբարանադաշտը կից է բնակավայրին հարաւից: Երեք տասնեակից աւելի մեծ դամբարաններ քանդուած են եւ թալանուած: Դամբարանների կառուցման համար անհրաժեշտ շինանիւթը հիմնականում բերուել է մօտ 1 կմ արեւելք գտնուող բլրակից, որը ժամանակին քարհանք է ծառայել[19]: Մեծ դամբանախցերի վերին մակերեսները կրճատելու եւ դրանք փոքր ծածկասալերով փակելու համար անհրաժեշտ է եղել իւրայատուկ ծածկի՝ «կեղծ թաղի» կառուցում[20]: Դրա համար առանձնացուել են զանգուածեղ, ծանր հիմք եւ համեմատաբար բարակ վերնամաս ունեցող քարաբեկորները, որոնց առաւել դիւրին ու անվնաս տեղափոխման համար՝ իւրաքանչիւրի նեղ ու բարակ վերնամասում 5-10 սմ. անցք է բացուել: Այնուհետեւ երկարաւուն (մինչեւ 3,5-4 մ երկարութեամբ), զանգուածեղ (3-4 տոննայից ոչ-պակաս քաշով) այդ քարաբեկորները մեծ դամբանախցերի երկայնական երկու կողմերից տեղադրուել են այնպէս, որ համեմատաբար բարակ ու նեղ հատուածները լինեն կառոյցի վերնամասում, իսկ ծաւալուն ու ծանր մասերը՝ յենուեն դամբանապատերի վրայ: Նման կառուցուածքի շնորհիւ «կեղծ թաղի» բրգաձեւ քարաբեկորները մի կողմից կրճատել են դամբանախցի վերնամասի թռիչքը, իսկ միւս կողմից՝ իրենց վրայ տեղադրուած ծածկասալերի ծանրութեան տակ չեն շրջուել դամբանախցի մէջ:

Հենց այդպիսին է դամբարանադաշտի կենտրոնական հատուածում գտնուող եւ 2014-17ի ընթացքում հետազօտուած դամբարանը[21]: Կառոյցն օղակուած է շուրջ 18 մ տրամագիծ ունեցող քարաշար *կրոմլէխ*ով[22], որի կենտրոնում մօտ 7 մ երկարութեամբ եւ 3 մ լայնքով դամբանախուցն է, կողմնորոշուած՝ արեւմուտքից արեւելք: *Կրոմլէխ*ի ներքին տարածքը՝ մինչեւ դամբանախցի պատերը, ամբողջութեամբ պատուած է մանր քարալիցքով: *Կրոմլէխ*ի շրջանաձեւ շարի արեւմտեան եզրից սկսւում է մօտ 1 մ լայնք, 1 մ խորութիւն եւ շուրջ 7 մ երկարութիւն ունեցող, քարաշար, ստորգետնեայ մուտք, որը ձգուելով դէպի արեւելք միանում է դամբանախցին: Վերջինիս 2013-16ի պեղման աշխատանքների ընթացքում հանուեցին ներս թափուած 3 ծածկասալերը, ինչպէս նաեւ բացուեցին տարբեր ժամանակաշրջանների վերաբերող նիւթեր՝ միջինբրոնզէդարեան գունազարդ անօթների բեկորներ, ուշբրոնզէդարեան խեցեղէնի մասեր, երկաթէդարեան սեւ, գորշ եւ բաց դարչնաւուն կաւանօթների մնացորդներ, Ք.ա. Ժ.-Ը./Է. դարերին վերաբերող երկաթէ նիզակներ, կեռ դաշոյն, բրոնզէ մազխիլ, շաղախից ուլունքահատիկներ եւն.: 2017ին խցի վերջնական պեղումների արդիւնքում, 3,15 մ խորութեան վրայ ի յայտ եկան Ք.ա. Բ.

հազարամեակի վերջ-Ա. հազարամեակի առաջին կէսով թուագրուող խեցեղէնի, բրոնզէ ապարանջանների, սորդիոնէ ուլունքների եւ հնամարդաբանական նիւթերի (ըստ նախնական տուեալների՝ 4 մարդու) բազմաթիւ մնացորդներ: Պեղուած նիւթը հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում նաեւ մշակութային փոխառնչութիւնների վերաբերեալ: Մասնաւորապէս յայտնաբերուած որոշ խեցանօթների բեկորներ ուղղակի կապեր են մատնանշում իրանական սարահարթի երկաթէդարեան հնավայրերի հետ: Դատելով հելլէնիստական շրջանի երկու գունազարդ կաւաբեկորների եւ ներկուած իրանով, օձագլուխ բրոնզէ ապարանջանների առկայութիւնից՝ դամբանախցի յատակին Ք.ա. Զ.-Դ. դարերում կատարուել է նաեւ մանկան թաղում:

Արշաւախումբը 2017 Հոկտեմբերին պեղման աշխատանքներ իրականացրեց նաեւ յուշարձանն արեւելեան կողմից եզերող եւ ուղղաձիգ դիրքով կանգնեցուած զանգուածեղ քարաբեկորների հատուածում: Աշխատանքների արդիւնքում բացուեց այդ քարերի տակ շարուած եւ յուշարձանի արեւելեան եզրով հարաւից հիւսիս ձգուող պարսպի շուրջ 1,50 մ բարձրութեամբ եւ 10 մ երկարութեամբ լաւ պահպանուած շարուածքը: Դրա մօտից եւ միջից յայտնաբերուած խեցու բեկորները հիմնականում վերաբերում են Ք.ա. Զ.-Ե. դարերին. սա թոյլ է տալիս նախնական կարծիք յայտնել վերջինիս կառուցման ժամանակաշրջանի մասին: Ըստ որում հիւսիսից հարաւ ձգուող պատը, դատելով պեղուած հատուածում բացուած կից կառոյցից, տեղ-տեղ համալրուել է կցակառոյցներով, որոնք, հաւանաբար, աւելի ամուր ու կայուն են դարձրել շարը:

Հաշուի առնելով ե՛ւ գրաւոր, ե՛ւ հնագիտական նիւթերի ընձեռած այսօրուայ տուեալները, հրապուրիչ է Ծուլուքու Երկրի կողմից վերահսկուող տարածքի մէջ ժամանակին մտնող Զօրաց Քարերի երկաթէդարեան հզօր բնակատեղին համադրելու Սարդուրի Բ.ի եւ Արգիշթի Բ.ի մօտ յիշատակուող տեղի բնակավայրերից որեւէ մէկի (թերեւս Իրդուա կամ Ամուշա «քաղաքների») հետ: Սակայն դա հապճեպ եւ առայժմ շատ առումներով չհիմնաւորուած մօտեցում կարող է լինել: Կարծում ենք, որ յետագայ պեղումները դեռ հնարաւորութիւն կը տան յուշարձանի տարածքում աւելի հիմնաւոր նիւթեր եւ - չի բացառում - գրաւոր սկզբնաղբիւրներ գտնել ու դրանց հիման վրայ պարզել ինչպէս ընդհանուր տարածքի, այնպէս եւ բուն յուշարձանի հին անուանումները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Е. Меликъ-Шахназаровъ, "Гошунъ-Дашъ," *Сборникъ Матеріалов для Описанія Местностей И Племенъ Кавказа* (Ե. Մելիք-Շահնազարով, «Ղոշուն-Դաշ»,

Կովկասի տեղանքի եւ ցեղերի նկարագրական նիւթերի ժողովածու), Կովկասի Կրթական Վարչաշրջանի Հրատ., թողարկում XIII, Թիֆլիս, 1892, էջ 124-7. նաեւ՝ Ե. Լալայեան, *Դամբանների Պեղումներ Խորհրդային Հայաստանում*, Երեւան, Մելքոնեան Ֆոնդի Հրատ., 1931, էջ 63, 66, նկ. 14. նաեւ՝ Ն. Ադոնց, *Հայաստանի Պատմութիւն*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1972, էջ 11. նաեւ՝ Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 3*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1991, էջ 575, *Հտր. 5*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2001, էջ 323, 669:

[2] Արամ Ղանալանեան, *Աւանդապատում*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 263, 270:

[3] Ե. Լալայեան, «Սիսիան, Նիւթեր Ապագայ Ուսումնասիրութեան Համար», *Ազգագրական Հանդէս # Գ.*, Թիֆլիս, 1898, էջ 162-82. Նաեւ նոյն՝ «Շարուր Դարալագեազի Գաւառ», *Ազգագրական Հանդէս, Գիրք XII*, Թիֆլիս, 1904, էջ 264. նաեւ՝ Ս. Բարխուդարեան, «Գորիսի, Սիսիանի Եւ Ղափանի Շրջաններ», *Դիւան Հայ Վիմագրութեան Մատենաշար, # Ա*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1960, էջ 122. նաեւ՝ Ստեփան Լիսիցեան, *Զանգեզուրի Հայերը*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, տախտակ CXIV. նաեւ՝ Ս. Եսայեան, «Զանգեզուրի Վաղ Հնագիտական Յուշարձանները», *Լրաբեր*, 1972:4, էջ 65. նաեւ՝ Օ. Խնկիկեան, «Սիսիանի Զօրաքարերը», *Հայաստանի Բնութիւնը*, Երեւան, 1984:4. նաեւ՝ Մ. Հասրաթեան, *Պատմա-Հնագիտական Ուսումնասիրութիւններ*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 175. նաեւ՝ Վ. Յարութիւնեան, *Հայկական Ճարտարապետութեան Պատմութիւն*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1992, էջ 13. նաեւ՝ Պարիս Հերունի, «Քարահունջ – Հնագոյն Աստղադիտարան Սիսիանում», *Գարուն*, Երեւան, 1998:5, էջ 87-93. նաեւ՝ П. Геруни, "Доисторическая Каменная Обсерватория Карахундж-Карениш" (Պ. Հերունի, «Մինչպատմական Քարէ Աստղադիտարան Քարահունջ - Քարենիշ»), *Հայաստանի Ազգային Ակադեմիայի Զեկոյցներ*, # 4, Երեւան, 1998, էջ 307-28. նաեւ՝ O. S. Xnkikyan, *Syunik' During the Bronze and Iron Ages*, Barrington, 2002, էջ 9, 25-9, 60-1, 65-7, 148, 167, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9. նաեւ՝ Հ. Աւետիսեան, Ա. Գնունի, Ա. Բոբոխեան, Գ. Սարգսեան, *Բրոնզ-Երկաթէդարեան Սիւնիքի Սրբազան Լանդշաֆտը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2015:

[4] Г. Мелликишвили, *Урартские Клиообразные Надписи* (Գ. Մելիքիշվիլի, Ուրարտական Սեպագիր Արձանագրութիւններ), Մոսկուա, 1960, էջ 273-5. նաեւ՝ Н. Арутюнян, *Корпус Урартских Клинообразных Надписей* (Ն. Յարութիւնեան, Ուրարտական Սեպագիր Արձանագրութիւնների Համահաւաք), Երեւան, 2001, էջ 227-9:

[5] Ն. Յարութիւնեան, «Արգիշտի II-ի Նորայայտ Սեպագիրը», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1979:3, էջ 93-104. նաեւ՝ Н. Арутюнян, "Новая Урартская Надпись из Сисиана", *Древний Восток*, (Ն. Յարութիւնեան, «Ուրարտական Նոր Արձանագրութիւն Սիսիանից»,) *Հին Արեւելք*, 1983:4,

Երեւան, էջ 195-229. նաեւ՝ Վ. Գայսէրեան, «Արգիշթէ II-ի Սիսիանի Արձանագրութիւնը», *Լրաբեր*, 1986:6, էջ 67-79:

[6] M. Salvini, "The Inscriptions Ayanis (Rusaẖinili Eiduru-Kai): Cunieform and Hieroglyphic" in *Ayanis I (Ten Years Excavations at Rusaẖinili Eiduru-kai, 1989-1998), Documenta Asiana VI*, edited by Altan Çilingiroğlu and Mirjo Salvini], Հռոմ, 2001, էջ 258, նկ. 10-12:

[7] Меликишвили, 155, A 13-21. նաեւ՝ Арутюнян, 241, A 13-21:

[8] Արձանագրութիւնում URU «քաղաք» բացայայտչի փոխարէն ուրարտացի գրչի կողմից սխալմամբ փորագրուել է KUR «երկիր» բացայայտիչը: Արձանագրութեան շարունակութիւնը հաստատում է, որ խօսքը ոչ թէ երկրի, այլ ամրացուած «քաղաքի»՝ բնակավայրի մասին է: Վերծանման մէջ այն ներկայացնում է «քաղաք» ձեւով:

[9] Меликишвили, էջ 300-1, 430-1:

[10] Н. Арутюнян, *Топонимика Урарту* (Ն. Յարութիւնեան, Ուրարտուի Տեղանուանաբանութիւնը), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 262-3:

[11] Арутюнян, "Новая", էջ 212-5:

[12] Թերեւս նշանակում է «ընդդիմացան, ըմբոստացան, ապստամբեցին»:

[13] Н. Арутюнян, «Заметки по Урартской Эпиграфике», *Древний Восток и Мировая Культура*, (Ն. Յարութիւնեան, Դիտողութիւններ Ուրարտական Վիմագրութեան շուրջ, *Հին Արեւելքն Ու Համաշխարհային Մշակոյթը* ժողովածու) Մոսկուա, 1981, էջ 78-9. նաեւ՝ Арутюнян, "Новая", էջ 217-8. նաեւ՝ Арутюнян, *Топонимика*, էջ 236-7. նաեւ՝ Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 325, 509. նաեւ՝ Աշոտ Աբրահամեան, *Անանիա Շիրակացու Մատենագիտութիւնը*, Երեւան, Հայպետհրատ, 1944, էջ 350. նաեւ՝ Ս. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխահացոյց»-ի*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1963, էջ 109-10. նաեւ՝ Ստեփանոս Օրբէլեան, *Սիւնիքի Պատմութիւն*, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1986, էջ 394-5:

[14] Арутюнян, "Новая", էջ 218:

[15] Меликишвили, 155, A, 18-19. նաեւ՝ Арутюнян, 241, A, 18-19.

[16] Salvini, էջ 258, նկ. 10-12:

[17] Ներկայումս դրանք Հայաստանի Պատմութեան Թանգարանի թիւ 962 հնագիտական հաւաքածուն են կազմում:

[18] Xnkikyan, էջ 65-7, նկ. 4, pl. VI-VII, XL, pl. LIII, fig. 1-32, pl. LIV, fig. 5-9.

[19] Ա. Փիլիպոսեան, Ա. Աւագեան, *Զօրաց Քարեր*, Երեւան, 2016, էջ 12:

[20] Ժ. Խաչատրեան, «Հայաստանում «Կեղծ Թաղի» Առաջացման Հարցի Շուրջ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1982:3, էջ 227-32:

[21] Այն որոշ ոչ-մասնագէտ հետաքրքրուողներ «աստղադիտարան» են յորջորջում:

[22] «Կրոմլէխ»ն ընդունուած եզր է հնագիտութեան մէջ եւ կիրառւում է բոլոր լեզուներում: Այն կազմուած է բրետոներէն "crom" - «շրջան, սեղան» եւ "lech" - «քար» բառարմատներից եւ նշանակում է «քարերից շարուած շրջան, քարէ բոլորաշրջան»: Նման շրջանները բրոնզի եւ երկաթի պարբերաշրջաններում կառուցում էին դամբանախցերի շուրջբոլորը եւ սահմանազատում այն սրբազան տարածքը, որում իրականացուել էր թաղման արարողութիւնը: